

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

THE REPUBLIC OF ARTSAKH  
THE MINISTRY OF EDUCATION,  
SCIENCE AND SPORT  
MESROP MASHTOTS UNIVERSITY




РЕСПУБЛИКА АРЦАХ  
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ,  
НАУКИ И СПОРТА  
УНИВЕРСИТЕТ МЕСРОП МАШТОЦ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ  
ԿՈՎԿԱՍԸ՝ ՄԵՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՈՒՆ

МЕЖДУНАРОДНАЯ НАУЧНАЯ КОНФЕРЕНЦИЯ  
КАВКАЗ – НАШ ОБЩИЙ ДОМ

INTERNATIONAL SCIENTIFIC CONFERENCE  
CAUCASUS – OUR COMMON HOME

ԼՎԻՐԿՈՒՄ Է ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ 20-ԱՄՅԱԿԻՆ  
ПОСВЯЩАЕТСЯ 20-ЛЕТИЮ ДЕЯТЕЛЬНОСТИ УНИВЕРСИТЕТА МЕСРОП МАШТОЦ  
DEVOTED TO THE 20<sup>TH</sup> ANNIVERSARY OF MESROP MASHTOTS UNIVERSITY



27-29 OCTOBER  
STEPANAKERT 2017

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱԴԱՆ

РЕСПУБЛИКА АРЦАХ  
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ И СПОРТА  
УНИВЕРСИТЕТ МЕСРОП МАШТОЦ  
THE REPUBLIC OF ARTSAKH  
THE MINISTRY OF EDUCATION, SCIENCE AND SPORT  
MESROP MASHTOTS UNIVERSITY

ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՀՈՂՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ  
СБОРНИК СТАТЕЙ КОНФЕРЕНЦИИ  
SET OF CONFERENCE ARTICLES

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝  
նվիրված Մեսրոպ Մաշտոց Համալսարանի գործունեության  
20-ամյակին

*ԿՈՎԿԱՍՆ՝ ՄԵՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՈՒՆ*

МЕЖДУНАРОДНАЯ НАУЧНАЯ КОНФЕРЕНЦИЯ,  
посвященная 20-летию деятельности  
Университета Месроп Маштоц

*КАВКАЗ – НАШ ОБЩИЙ ДОМ*

INTERNATIONAL SCIENTIFIC CONFERENCE  
DEVOTED TO THE 20<sup>TH</sup> ANNIVERSARY OF MESROP MASHTOTS UNIVERSITY

*CAUCASUS – OUR COMMON HOME*

27-29 ՀՈՎՏԵՍԲԵՐԻ  
ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 2017

27-29 ОКТЯБРЯ  
СТЕПАНАКЕРТ 2017

27-29 OCTOBER  
STEPANAKERT 2017

ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Նախագահ	Գ.Ս.Գաբրիելյան, ՄՄՀ ռեկտոր, մ.գ.թ., ՄՄՀ պրոֆեսոր (Արցախ)
Համանախագահ	Ղ.Ս.Բաբայան, փ.գ.թ., ՄՄՀ պրոֆեսոր (Արցախ)
Վ.Ռ.Բալայան	Արցախի Հանրապետության Ազգային ժողովի փոխնախագահ, պ.գ.դ., պրոֆեսոր
Ս.Ա.Խանյան	ԱրՊՀ և ՄՄՀ պրոֆեսոր, ք.գ.դ.
Ս.Շ.Ծաղիկյան	ՀՌՀ քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի վարիչ, ի.գ.դ., պրոֆեսոր
Ա.Ս.Ծպենեցյան	ՀՀ պետական կառավարման ակադեմիա, տ.գ.թ., դոցենտ
Վ.Ն.Կոնովալով	ՀՂՀ, Սոցիոլոգիայի և տարածաշրջանագիտության ինստիտուտի կոնֆլիկտոլոգիայի և ազգային անվտանգության ամբիոնի փ.գ.թ., պրոֆեսոր
Վ.Զ.Հակոբյան	ՊՊԼՀ պ.գ.թ., դոցենտ, ՄՄՀ պատվավոր պրոֆեսոր
Է.Ա.Հայրապետյան	ՄՄՀ պրոռեկտոր, մ.գ.թ., դոցենտ
Լ.Շ.Հովհաննիսյան	ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր
Լ.Գ.Ղարախանյան	ԱՀ ԿԳՄՆ, Խ.գ.թ., դոցենտ
Է.Գ.Մինասյան	ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան, պ.գ.դ., պրոֆեսոր
Լ.Ա.Միրզոյան	ՀՃՇԱՀ, մանկ. գիտ. թեկ., դոցենտ
Վ.Ս.Պետրոսյան	ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի վարիչ, ԵՊՀ հայ-քրդական առնչությունների բաժնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ
Ս.Ա.Պողոսյան	Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետի դեկանի տեղակալ, պ.գ.դ., դոցենտ
Ս.Պ.Պոզեյուն	ՀՂՀ, Փիլիսոփայության և հասարակա-քաղաքական գիտությունների ինստիտուտի տեսական և կիրառական քաղաքագիտության ամբիոնի պրոֆեսոր, ք.գ.դ.
Գ.Ս.Քեչյան	ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի վարիչ, ք.գ.դ., պրոֆեսոր

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Председатель:	Д.С.Габриелян, ректор УММ, к.п.н., профессор УММ
Сопредседатель:	Г.М.Бабаян, к.филос.н., профессор УММ
Э.А.Այրապետյան	к.п.н., доцент, проректор УММ
В.З.Ակոբյան	ПГЛУ, к.ист.н., доцент, почетный профессор УММ
В.Р.Բալայան	вице-спикер Национального Собрания РА, д.и.н., профессор
Լ.Գ.Կարահանյան	МОНС РА, к.п.н., доцент
Գ.Մ.Կերյան	Заведующий кафедрой политических институтов и процессов ЕГУ, д.п.н., профессор.
Վ.Ն.Կոնովалов	профессор кафедры конфликтологии и национальной безопасности Института социологии и регионоведения ЮФУ, д.ф.н.
Э.Գ.Մինասյան	декан исторического факультета ЕГУ, д.и.н., профессор
Լ.Ա.Միրզոյան	НУАСА, к.п.н., доцент
Լ.Ս.Օսանյան	Член-корреспондент НАН РА, профессор
Վ.Ս.Սեդրոսյան	заведующий кафедрой международных отношений и дипломатии ЕГУ, руководитель отдела армяно-курдских отношений ЕГУ, к.и.н., доцент
Ս.Ա.Սոցոյան	заместитель декана факультета истории и правоведения АГПИУ им.Х.Абовяна, д.и.н., доцент
Ս.Ս.Սոցոյան	профессор кафедры теоретической и прикладной политологии Института философии и социально-политических наук, ЮФУ, д.п.н.
Ս.Ա.Սահյան	д.ф.н., профессор АрГУ и УММ
Ս.Ս.Սահյան	зав.кафедрой уголовного права и уголовно-процессуального права РАУ, д.юр.н., профессор
Ա.Ս.Սահյան	Академия государственного управления РА, к.э.н., доцент

ՀՏԴ 378:06  
ԳՍԴ 74.58  
Կ 767

Կովկասը՝ մեր ընդհանուր տուն: Միջազգային գիտաժողով  
Կ 767 նվրիված Մեսրոպ Մաշտոց Համալսարանի գործունեության 20-ամյակին:  
Ստեփանակերտ: «Դիզակ պլուս» հրատ., 2017.- 508 էջ:

Настоящий сборник статей по итогам международной научной конференции, проходившей в Университете Месроп Маштоц города Степанакерта (27-29 октября 2017 года), представляет собой результат сотрудничества ученых Арцаха, Армении и других стран СНГ. Участники конференции представили свое видение и анализ актуальных вопросов гуманитарного, экономического и социально-политического развития региона.

**ԱՆՉԿԱՅՔՔԱՐԱՀՈՒՆՉԲՈՒՈՐԱՔԱՐ**  
(տեղագրական և ստուգաբանական քննություն)

**Մհեր Քումունց**  
**բ.գ.թ., դոցենտ, Գորիսի պետական համալսարան**  
**Սյունիքի հայագիտական հետազոտությունների կենտրոն**  
**Հայաստան**

***Անտառագիտաբանություն:** Գորիսի նշանավոր և հին գյուղերից է Քարահունջը, որ ընդգրկված է եղել Սյունի գավառում: Ս. Օրբելյանի կազմած Հաբանդ գավառի հարկացուցակում հիշատակված չէ Քարահունջ բնակավայրը: Կարծում ենք, որ այսօրվա Քարահունջ գյուղը Ս. Օրբելյանի հիշատակած Անձկայք բնակավայրն է: Քարահունջ բառը կազմված է քար և օնջ արմատներից:*

*«Սյունիքի պատմության» մեջ երկու անգամ նշվում է Բոլորաքար: Այն նշվում է Միսիանի Նորիք գյուղի տարածքում:*

*Կարծում ենք, որ Բոլորաքարը այսօրվա Քարահունջ, Ջորաց քարեր կոչվող վայրի հին անվանումն է, որ նշանակում է «երկնքի առանցք»:*

***Բանայի բառեր՝** Քարահունջ, բնակավայր, ստուգաբանություն, Ս. Օրբելյանի, Անձկայք, Բոլորաքար, Հաբանդ գավառ, «առանցք երկնքի»:*

Գորիսի նշանավոր և հին գյուղերից է **Քարահունջը**<sup>1</sup>, որ հայտնի է ոչ միայն թթի օղիով, այլև գինով, համով պտուղ-բանջարեղենով, հնագույն և միջնադարյան հուշարձաններով՝ բերդեր, խաչքարեր, վիշապաքարեր, հնձաններ և այլն:

Քարահունջ անվան, բնակավայրի տեղադրության և նման այլ հարցերի մասին բազմիցս խոսվել է: Մենք հարցը կդիտարկենք մեր ունեցած կարծիքների սահմանում: Որևէ գնահատական չենք տալիս եղած ուսումնասիրություններին, քանի որ քննությունը տարվում է **Քարահունջի** տեղադրման և ստուգաբանության հարցերի միջակայքում:

Պատմական շրջանում Վարարակն գետի հովիտը՝ սկսած **Ակնա** գյուղի հյուսիսային լեռներից մինչև **Որոտան գետը**, ընդգրկված էր **Հաբանդ** գավառում: Որոտան գետի ձորահովիտը՝ **Վարարակնի** գետամեջ թափվելու վայրը, նրանից հյուսիս և հարավ ընկած ընդարձակ տարածքը ընդգրկված են եղել պատմական **Բաղք** գավառի մեջ, իսկ խորհրդային շրջանում այն մինչև **Որոտան** գյուղը բռնակցված է եղել Ադրբեջանական ԽՍՀ-ին: Հետևելով Ս. Օրբելյանի **Հաբանդ** և **Բաղք** գավառներում նշած գյուղանուններին՝ նկատում ենք, որ Որոտան գետը սահմանել է այս գավառները . հյուսիսը՝ դեպի **Գորիս**, ընդգրկվել է Հաբանդ գավառի մեջ, իսկ հարավը՝ **Բաղք** գավառի: Բնարկե, այս բաժանումը պայմանական է, քանի որ տարբեր ժամանակներում փոխվել են գավառների սահմանները, անվանումները . այդ մասին նշում է նաև պատմիչը [13, էջ 70-71]: Հաբանդն գավառի ծայրեզրում է գտնվել նաև այսօրվա **Քարահունջ** գյուղը, որի վերաբերյալ պատմական տեղեկությունները նույնպես սակավ են: Այս բնակավայր-տարածքի նկարագրությանը հանդիպում ենք Ղ. Ալիշանի «Միսականում». «Կորեսի հարավային և Բարկուշատ մեծ գետի հյուսիսային կողմերի միջև երկուսից փարսախաչափ հավասար հեռավորությամբ **Քարահունջ** կամ **Քարունջ** գյուղն է՝ Ս. Հռիփսիմե եկեղեցով, Վարարակի աջից և անկյունում, որ [առաջանում է] նրա հետ միացող, նրա մի օժանդակ վտակով, որի աղբյուր-ակունք են **Սռուզ պուլագը** և **Ենտի պուլագը** [= Սառը(Յորտ) աղբյուրը և Յոթ աղբյուրը], եռագագաթ Յուչ Թեփելար լեռում, որից իջնելով և անցնելով վերոհիշյալ լճակով՝ մոտ 18 չափ բարձր քարաժայռերից թափվում է մեծ շառաչումով, որի համար և **Շռան** է կոչվում, և թերևս սրանից է ծագել գյուղի անունը՝ իբրև **քարերի հունչ՝ ձայն՝ քարերի հնչողիք**» [2, էջ 262]: Ս. Օրբելյանը Հաբանդում Քարահունջ բնակատեղի չի հիշատակում: Ղ. Ալիշանը փորձում է տեղագրական հենց այդ ուղղումն անել՝ ընդգծելով, որ Ս. Օրբելյանի օրոք էլ այդ բնակավայրը գոյություն է ունեցել. «Հին Ցուցակը Ծղուկի

<sup>1</sup> Բազմաթիվ բնակավայրեր կան այս և նրան մոտ անվամբ՝ **Քարունջ, Քարահունջ, Կարագունջ, Կարաունջ, Կարաունջ, Քարահունջ**, այլև բարբառային տարբերակներ: Այս մասին կարելի է տեսնել Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարանի համապատասխան բառահոդվածների ներքո, հ. 5, Եր., 2001:

արևելյան մասին **Այլախ** գյուղի հետ դասում է այս **Քարահունջ** գյուղը, բայց եթե իսկապես կա այս տեղում, որ նշանակեցինք ըստ ընտիր աշխարհագրայցի, ավելի հարմար է Հաբանդին, որին հարմար է գալիս և ճանապարհը, որ շինեց Աբրահամ կաթողիկոսը և Խնձորեսկից գնալով դեպի Տաթև՝ անցավ այս գյուղով և «Տեսանք,- ասում է,- մի ավերակ գյուղ. որ Տաթևի առաջնորդները բանադրել՝ նգովքով որոշել էին **Քարահունջ** անունը, աղերսեցին ինձ արձակել [կապանքը], և տեղն առնելով՝ արձակել տվեցի, օրհնեցի գյուղը, որտեղ մի պատվական եկեղեցի կար՝ սրբատաշ քարերով շինած»։ Այժմ այս գյուղում հողագործ հայերի 150 տներ են» [նույն տեղում]։ Եթե անգամ այսօրվա Քարահունջ գյուղը համեմատաբար նոր է, քանի որ այն չի հիշատակվում Ս. Օրբելյանի կողմից, այնուամենայնիվ, այսօր էլ նկատվում է, որ շրջակայքում եղել են հին բնակատեղիներ։ Իսկ դրանց անունների մեծ մասը և Ս. Օրբելյանի՝ այս տարածքում նշած բնակավայրերի տեղագրական և այլ հարցեր այսօր էլ ուսումնասիրված չեն։ Ղ. Ալիշանի Սյունիքի պատմությանը վերաբերող շարադրանքում կարդում ենք. «Քիչ հեռու՝ գետեզրին, կան կրային ջրերի հիվանդության պատճառ [լինող] աղբյուրներ։ 1840թ. Արարատի մեծ շարժի ժամանակ ավերվեց նաև այս գյուղը, որտեղ երկու վիհեր բացվեցին. մեկը՝ գյուղի միջավայրում, որը անցյալ տարի (1889) կրկին լայնացավ, որի պատճառով և պետությունը հրամայեց և հեռացրեց այնտեղից մոտիկ բնակվողներին։ Վերջին տարիներս գյուղին մոտիկ հայտնվեցին գետնածոր բնակարաններ ու խեցեղեն ամաններ, կահ-կարասիներ» [նույն տեղում]։

Վարարակնի հարավային հովիտը՝ մինչև Որոտան գետը, նախկին Էյվազլար և Դավոթլու գյուղերի հյուսիսային մասերը, այսօր ընդգրկված են **Հարթաշեն** և **Քարահունջ** գյուղերի սահմանում։ Սահմանը Վարարակն է, որը այս մասում հոսում է խոր ձորով։ Հենց այս տարածքի **Ծակեր** կոչվող վայրից մոտ 100մ դեպի հյուսիս-արևելք գտնվում է նորահայտ բերդը՝ **Սիրիջի /Շիրիջի/ քերձը**։ Ոչ միայն տարածքի, այլև բերդի մասին պատմական և այլ բնույթի տեղեկություններ գրեթե պահպանված չեն, բայց այն կարևոր և դիտարժան է այս տարածաշրջանի համար, քանի որ որպես բերդ-պատսպարան, որպես դիտանոց և ռազմական կայան գործել է նաև Արցախյան պատերազմի օրերին. այն եղել է քարահունջեցիների հիմնական հսկողական դիրքը ամբողջ ձորի հանդեպ։ Այս բերդը հսկող և հսկվող դիրքում է Որոտանի ավազանի **Քուրդիկ, Քեղալա, Մագրա, Նովու, Սալկ, Սեբանց** ամրոցների և **Թեյմուր** ամրացված բնակատեղի նկատմամբ։ Ուստի՝ Քարահունջը և նրա շրջակա տարածքը նշանակալից են եղել աշխարհագրական դիրքով։

Ստ. Օրբելյանը Հաբանդ գավառի մեջ, սակայն, չի նշում **Քարահունջ** անունով բնակավայրը։ Պատմիչի կողմից **Քարունջ-Քարահունջը** հիշատակվում է **Այլախ** գավառում և դա, բնականաբար, այսօրվա Գորիսի **Քարահունջը** լինել չէր կարող [13, էջ 395]։ Կան ենթադրություններ, որ Գորիսի **Քարահունջ** գյուղանունը վերանվանություն է, և դա արել են կամ **Այլախի Քարունջ-Քարահունջից** այստեղ տեղավորված վերաբնակիչները<sup>1</sup>, կամ էլ, ինչպես պնդում է գյուղի վերակենդանացման մասին ավանդագրույցը, բնակավայրը վերանվանակոչվել է Շահ-Աբասի բռնագաղթից խույս տված երեք նախիջևանցի եղբայրների կողմից, որոնք բերել էին նաև թթենու տունկեր [3, էջ 334-335]։ Նախիջևանում եղել է **Քարունջ-Քարահունջ** անունով խոշոր բնակավայր (գյուղաքաղաք) [7, էջ 334]։

Գորիսի տարածքում **Քարահունջ** գյուղի հիշատակումը հանդիպում է 17-18-րդ դարերից սկսած [4, էջ 12]; [5, էջ 151]։ Բայց, ինչպես նշեցինք վերևում, դա չի նշանակում, որ գյուղի պատմությունը սկսում է հենց այդ ժամանակից։ Խոսքը այս վայրի Քարահունջ տեղանվան գործածությանն է վերաբերում։

Ներկայիս թեքության վրա գտնվող **Քարահունջի** վերին թաղի աղբյուրը և շրջակայքը կոչվում են **Անձկ**, գյուղացիները անվանում են նաև **Անցք/Անցի աղբյուր**։ Այստեղից դեպի սարահարթ կարելի է բարձրանալ քարաժայռերի միջով անցնող ուղիով։ Ամենայն հավանականությամբ՝ այստեղ է եղել Ստ. Օրբելյանի կողմից Հաբանդ գավառի հարկացուցակում հիշատակված և 12 միավոր հարկ վճարող միջին մեծությամբ **Անձկայք** բնակավայրը [12, էջ 63-68]։ Գյուղը ժամանակին դատարկվել է, հետո վերաբնակեցվել, և հին գյուղանունը մնացել է միայն բնակավայրի մի թաղամասում։ **Անձկայք** գյուղանունը կարող էր ծագել հայերեն **անձուկ**՝ «կիրճ», «նեղ անցք» բառից [6, էջ 204], որ ժողովրդական ստուգաբանությամբ հետագայում դարձել է նաև **անցք**։ **Քարահունջ** գյուղից մի փոքր

<sup>1</sup> Ակադ. Պ. Հերունին, Սիսիանի Ջորաց քարեր հնավայրը ուսումնասիրելով և այն դիտելով որպես հնագույն աստղադիտարան, առաջարկում է այն կոչել **Քարահունջ** (տե՛ս Սյունիք, լրագիր, 1996, թիվ 4, նաև՝ Ազգ լրագիր, 2003, 16 ապրիլ)։ Հնավայրի տարածքը ընկնում էր **Այլախ** գավառի մեջ։

հարավ՝ Վարարակն գետի աջակողմյան լեռնալանջին, կա մի այլ հին գյուղատեղ, որը և կարող է լինել պատմիչի հիշատակած ավելի փոքր, 6 միավոր հարկ վճարող երկրորդ՝ **Անձկայք** գյուղը: Գալով այսօրվա **Քարահունջ** բառի ստուգաբանությանը՝ նկատում ենք, որ այն **Անձկ /Անձկայք/** գյուղի վերին թաղամասի անունից է և ծագում է **Քար+ունջ** արմատներից: Բառիմաստը բարբառային դրսևորումն ունի և ամենևին էլ մի այլ տեղանվան փոխանցումը չէ. \*kar- [10, էջ 130] + ունջ [6, էջ 604] «տակ», «խորք», «հատակ»: Քարահունջ բառի ժողովրդական արտահայտության ամենատարածված **Քրունջ**, ապա **ա** հոդակապի առաջացման և բառարմատի **ու**-ի ազդեցությամբ **հ** աճականի գոյությամբ՝ **Քրահունջ** ձևերն են: Բարդության նմանությամբ Ղարաբաղի և Գորիսի բարբառներում տարածված ձևեր են **քարին տակ**, **քրատակ** - «քարատակ՝ ժայռի մեջ փորված անձավ» կամ «հիմնահատակ եղած» [8, էջ 498] բառերը: **Ունջ** արմատի համար ՆՀԲ նշում է թուրք. **uc** «ծայր» [15, էջ 552], որ, անշուշտ, չի ընտրվում հայերենի այս և նման բարդությունների համար: Թերևս հավանական կարելի է համարել Գորիսի և Ղարաբաղի բարբառներում տարածված **ոնջ** «մուր», «երկաթի ժանգ», «սարդոստայն», այստեղից՝ **ոնջուտ-ունջուտ** «ունջով պատած», «ժանգոտած» բառը, քանի որ այդ տարածքի ժայռեղեն հյուսվածքը ժանգագույն է, ասել է թե՛ քարածանգ, որ կարող էր գյուղանունից անկախ-անջատ գոյություն ունեցած լինի տարածքի համար, որն էլ հետագայում վերականգնվել է:

**Ոչ թե Քարահունջ, Չորաց քարեր կամ Ղոշունդաշ, այլ Բոլորաքար**  
/տեսակետ/

Բազմիցս խոսվել, գրվել է **Քարահունջ-Չորաց քարեր-Ղոշունդաշ** տեղավայրի մասին, եղել են բուռն քննարկումներ, վեճեր, և, այնուամենայնիվ, միասնական կարծիք չի ձևավորվել: Որքան զարգանում է պատմագիտությունը, այնքան խտանում են տեսակետները ընդհանրապես և մասնավորապես **Քարահունջի** /սա պայմանական անվանում է/ հարցում:

Այստեղ չենք փորձի ի մի բերել նախկինում եղած կարծիքները, տեսակետները, քանի որ դրանք շատ են և տարածված: Յուրաքանչյուրի մեջ եղած արժանահավատ և թերարժեք կողմերը քննելու դեպքում ծավալուն նյութ կստացվի:

Իհարկե, գնահատելի են մեկնության այն բոլոր փորձերը, որ արվել են այս բնագավառում: Բոլոր աշխատանքներում էլ կան հավանական, ընդունելի կողմեր: Խոստովանենք, սակայն, որ **Քարահունջ-Չորաց քարեր-Ղոշունդաշ** տեղավայրի անվան նախնական ձևը մինչև օրս անհայտ է:

Անկախ բոլոր կարծիքներից և հետևություններից՝ կփորձենք մի տեսակետ շրջանառել, որ գուցե նախապես եղել է, պարզապես մեր աչքից սպրդել է:

Այսպիսով՝ կարծում ենք, որ այդ տեղավայրը պետք է ունենար հայկական անվանում կամ թերևս հին անվանում՝ գրավոր վկայությամբ, որովհետև՝ 1. Քարահունջ անունը այդ տեղանվան համար գործածված չէ մեր մատենագրության մեջ կամ այլ աղբյուրներում: **Քարունջ** գյուղանուն՝ 10 միավոր հարկով, նշվում է Եվայլախ գավառում [13, էջ 395]: Իսկ Ղոշուն դաշ<sup>1</sup> անունը նոր է և տրված է այդ վայրին թուրքական տարրի՝ այստեղ հայտնվելուց՝ թերևս 14-րդ դարից հետո:

2. Խոսքը հնավայրի մասին է: Եթե այն որևէ արժեք հետագայում չունենար կամ իր նպատակին չծառայեր, միևնույն է, արժանի էր հիշատակման: Բայց, ցավոք, չունենք կոնկրետ մի աղբյուր, որտեղ նշվում է դրա մասին:

Սյունիքի պատմությանը վերաբերող ցանկացած ուսումնասիրություն կատարելիս նախապես պետք է դիմել Ս. Օրբելյանին: Այսպես՝ «Սյունիքի պատմության» մեջ երկու անգամ նշվում է **Բոլորաքար** [13, էջ 253, 271]: Այն տեղադրվում է Նորիքի<sup>2</sup> վանքի բաժնում: Ընդ որում՝ նման գյուղ՝ **Բոլորաքար**, հարկացուցակում չի նշվում: Նորիքը գտնվում է Ծղուկ գավառի եզրում՝ **Ցուր, Խովիտ** և **Հարժիք** գյուղերի հարևանությամբ [13, էջ 394]: «Հակոբին հաջորդում է Գրիգորը, որը ամեն ինչով պայծառացած էր՝ թե՛ ներքնապես, թե՛ արտաքնապես, և բազմաթիվ երևելի գործեր կատարեց հայրապետանոցում. քանդեց ու հիմնիվեր բնաջնջեց անհիժարակ Ցուրա քարը, Ձագիկ իշխանի որդի Փարաջից հոգեբաժին նվեր վերցրեց **Բոլորաքարը** /ընդգծումը մերն է՝ Մ. Բ./ իր ողջ սահման[ներ]ով,

<sup>1</sup> Հայկական հեքիաթներից մեկում «ղոշուն» բառը օգտագործվում է «գորք» իմաստով: Հենց սրան են կառչել Չորաց քար թարգմանության կողմնակիցները: Բանն այն է, որ նրանք «գորք» բառը դիտարկում են որպես որոշիչ, ինչը սխալ է:

<sup>2</sup> Նորիք անվամբ գյուղեր երկուսն են՝ Վայոց ձորում և Ծղուկում՝ 12 միավորով:

բացի Նորիք վանքի բաժնից, որը հետո վերցրեց մյուս Տեր-Գրիգորը Խաղբակի որդի Դլեից»։ Չենք կարծում, որ սա Տաթևի վանքից դեպի հյուսիս-արևմուտք գտնվող **Պլոնրաքար** հնավայրն է, ինչպես նկատում է Գ. Գրիգորյանը [9, էջ 239]։ Այս վայրը Տաթևից ընդամենը 1 կիլոմետրի վրա է գտնվում, իսկ Ս. Օրբեյանը **Բոլորաքարը** նշում է Նորիքի տարածքում. «Այս Գրիգոր եպիսկոպոսը Խաղբակի որդի Դլենից գնեց Նորիքի բաժին Բոլորաքարը ու նգովքներով հաստատեց սուրբ եկեղեցու վրա» [13; էջ 271]։ Ակնհայտ է, որ այսօրվա քարեղեն հուշարձանը մոտ է Սիսիանի Նորավանք գյուղին<sup>1</sup>, որը հավանաբար Ս. Օրբեյանի նշած Ծղուկ գավառի Նորիքն է [13, էջ 394]։ Ս. Օրբեյանը նշում է նաև Նորաշենիկ 6 միավոր հարկով գյուղը, որ թե՛ եպիսկոպոս Հակոբի, թե՛ Փիլպի թողած գրություններում նշվում է «նորիքցի», որ, կարծում ենք, համապատասխանում է Հաբանդ գավառի Նորաշենիկ գյուղին։ Հաբանդում և Ծղուկում «նոր» բաղադրիչով այլ գյուղ չի հիշատակվում։ Այս գյուղը Ս. Օրբեյանի մոսկովյան հրատարակության մեջ նշվում է Խանաձախ և Վաղատուր գյուղերից առաջ [14, էջ 375], իսկ նոր հրատարակության մեջ՝ Վաղատուր գյուղից առաջ [13, էջ 399]։

Այսպիսով՝ պետք է հավաստի համարել, որ Ս. Օրբեյանի նշած **Բոլորաքարը** ընկած է ոչ թե Տաթևի, այլ Նորավանքի տարածքում, եթե ընդունում ենք, որ Տաթևի հարկացուցակում նշված Ծղուկի Նորիքը այսօրվա Նարավան բնակավայրն է կամ թերևս գտնվում էր նրա շրջակայքում։ Եթե **Բոլորաքարը** բնակավայր չէ, ապա այն ինչ-որ հատուկ վայր է կամ հին բնակատեղի-սրբատեղի, որ հիշատակվում է Ս. Օրբեյանի պատմության մեջ։ Հեթանոսական շրջանի հուշարձանների, կոտրքերի վերաբերյալ առանձնակի պատմություններ սրտամոտ չեն եղել հայոց հոգևոր կյանքը պանծացնող Ս. Օրբեյանին։ Հնարավոր է, որ **Բոլորաքարի** որպես հեթանոսական հուշարձանի կամ քարակերտ կոթողի, նկարագրություն չտրվեր։

Գալով **Բոլորաքար** տեղանվան կազմությանը՝ պետք է նշել, որ **պլոնր|պլոնր|պլիլթր** Գորիսի բարբառում նշանակում է «կլոր»։ Իհարկե, սա գրաբարի **բոլոր** բառի բարբառային ձևն է 8, 318, բայց պետք է նկատի ունենալ, որ «բոլոր»-ը գրաբարում «կլոր» իմաստի կողքին, ինչպես հղում է Հր. Աճառյանը, ունեցել է նաև 1. «բոլորել, հյուսել», 2. «շուրջը պատել», 3. «շրջանը կատարել, վերջացնել» իմաստները 6 էջ 461, այլև «բոլորակ, գունդ, գնդաձև», «ի բոլորումն շարակցեալ գոյ սկիզբն և կատարումն», «բնեռ կամ առանցք երկնից» [15, էջ 500] և այլ իմաստներ։ Այն ծագում է հ.-ե. \*bhel-, \*bhol- արմատից սերբ. bǎljiti, լիթ. Bulis [17, էջ 98] և այլն, որ ունեն նաև իլիբերերը, կելտերերը, գերմաներերը [16, էջ 117] և **-ոբ/\*-ro/** ածանցից, որ նկատված է ինչպես **բոլոր**, այնպես էլ **գլոր**, **լքոր** արմատներում [10, էջ 235]։ Հստակ չենք կարող ասել, որ հենց այս վերջին՝ «երկնքի առանցք» իմաստն է ընկած **Բոլորաքար** բառի առաջին բաղադրիչի հիմքում՝ որպես աստղադիտարան կամ երկնքի երկրային կենտրոն։ Պետք է չգայթակղվել, չշտապել և հաստատուն չհամարել այս իմաստը բարդության մեջ. անհրաժեշտ է վերապահումով վերաբերվել բառի՝ բարդության մեջ ունեցած իմաստներին, քանի որ տեղավայրը հնագիտական ուսումնասիրության շրջանում է, և միայն պատմական, լեզվաբանական ու հնագիտական բնագավառներում արձանագրված համատեղ արդյունքները կարող են հստակեցնել հարցը։ Բայց մինևույն ժամանակ հերքելի չէ, որ քարեղեն հուշարձանը, որին այսօր տարբեր անվանումներ են տրվում աղբյուր չունենալու պատճառով, **բոլորաքար** է, այսինքն՝ քարերի կազմած շրջան, քարերով շրջապատված, գուցե նաև հին նշանակությամբ՝ որպես ծիսական վայր՝ **երկնքի առանցք, կենտրոն՝ բոլորաքար**։

Մա տեսակետ է։ Մենք չենք հակադարձում մինչև այժմ եղած մեկնաբանություններին։ Տեղավայրերի, հատկապես հնավայրերի տեղորոշելը և նրանց անվանումների ստուգաբանությունը միշտ էլ վերանայման կարիք ունեն։ **Քարահունջ-Չորաց Քարեր-Ղոշուն դաշ**, այսուհետև նաև **Բոլորաքար** տեղավայրի ուսումնասիրության մի փորձ է այս քննությունը, որի վերաբերյալ ակնկալվում են նոր և առավել հանգամանալից հետազոտություններ։

#### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ազգ լրագիր, 2003, 16 ապրիլ։
2. Ալիշան Ղ., Միսական. Տեղագրություն Միւնեաց աշխարհի, Ամստերդամ, 1893, էջ 262։
3. Դրասխանակերտցի Հովհ. կաթողիկոս, Հայոց պատմություն, աշխատասիրությամբ՝ Գ. Թոսունյանի, Եր., 1996։

<sup>1</sup> Տե՛ս քարտեզը՝ <https://www.google.ru/maps/@39.5373875,46.069382,8187m/data=!3m1!1e3>։

4. Ժամանակագրութիւն Ստոփանոսի Օրպէլեանի, Եր., 1942, հավելված:
5. Կրետացի Ար., Պատմություն, Եր., 1973:
6. Հր. Աճառյան, Հայերէն արմատական բառարան, հ. 1, Եր., 1926:
7. Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարանի համապատասխան բառահոդվածների ներքո, հ. 5, Եր., 2001,
8. Մարգարյան Ա., Գորիսի բարբառը, Եր., 1975:
9. Պատմա-բանասիրական հանդես, թ. 4, Եր., 1966:
10. Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն, Եր., 1987:
11. Սյունիք, լրագիր, 1996, թիվ 4:
12. Քումունց Մ., Հախվերդյան Ս., Ստ. Օրբելյանի հիշատակած մի քանի տեղանունների ստուգաբանության և տեղադրության հարցեր, Լեզու և լեզվաբանություն, թիվ 1-2, Եր., 2006:
13. Օրբելյան Ս., Սյունիքի պատմություն, Եր., 1986:
14. Օրբելյան Ս., Պատմութիւն տանն Սիսական, Մոսկվա, 1861:
15. Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1, 2, Վենետիկ, 1836,1837:
16. Elmegård J., Selected Papers on Indo-European Linguistics, v. 2, 1999.
17. Pokorny J., Indo-European Etymological Dictionary-Indogermanisches Etymologisches Woerterbuch, Current version: 5.2, 2012.
18. <https://www.google.ru/maps/@39.5373875,46.069382,8187m/data=!3m1!1e3/>:

#### РЕЗЮМЕ

**Андзкайк>Караундж<Болоракар  
(топографическое и этимологическое исследование)  
Мгер Кумунц**

**Ключевые слова:** Караундж, поселение, этимология, С. Орбелян, Андзкайк, Болоракар, провинции Абанд, «ось неба».

Караундж – один из известных и древнейших сел Гориса, которое было включено в провинцию Айлах. Караундж не упоминается в списке налогов провинции Абанд, составленном С. Орбеляном. Считаем, что сегодняшний Караундж – это населенный пункт Андзкайк, упомянутый С. Орбеляном. Слово Караундж состоит из корней **քար** и **օւջ**. В «Истории Сюника» два раза отмечается Болоракар. Это место отмечается в селе Норик на территории Сисиана. Считаем, что Болоракар – это старое название сегодняшнего населенного пункта Караундж, Зорац-Карер, которое означает «ось неба».

#### SUMMARY

**Andzkayq>Karahunj<Bolorakar  
(topographical and etymological research)  
Mher Kumunts**

**Key words:** Karahunj, settlement, etymology, S. Orbelian, Andzkayq, Bolorakar, Haband province, “axis of the sky”.

Karahunj is one of the oldest and most famous villages in Goris. It was included in Aylakh province. Karahunj is not mentioned in the tax list of Haband province, which was made by S. Orbelian. We think that today’s Karahunj is the settlement Andzkayq mentioned by S. Orbelian. The word Karahunj consists of roots **քար** and **օւջ**. Bolorakar is twice mentioned in “The History of Syunik.” The place is noted in village Noriq, in the territory of Sisian. We think Bolorakar is the old name of today’s settlement Karahunj, Zorats Karer, which means “axis of the sky.”